- Վրաստանի արևմուտքում մշակում են եգիպտացորեն, ցիտրուսներ, թեյ, ծխախոտ, իսկ արևելքում `խաղող, ցորեն , կարտոֆիլ:
- Խոշոր նավահանգիստներ են Բաթումը և Փոթին:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա թվարկել բնակչության խտությամբ խոշոր քաղաքներից երկուսը :
- Կարողանա քարտեզի վրա ցույց տալ Բաթում և Փոթի նավահանգիստները:

**Ադրբեջանի Հանրապետություն (Ադրբեջան) .Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞րն է Ադրբեջանի մայրաքաղաքը:
2. Ի՞նչ օգտակար հանածոներով է հարուստ երկրի ընդերքը :
3. Ո՞րն է Կասպից ծովի նշանակությունը Ադրբեջանի համար:

*առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Ադրբեջանի մայրաքաղաքը Բաքուն է :
- Ընդերքը հարուստ է նավթի, բնական գազի, երկաթի հանքաքարի, ալյումինի հումքի, մոլիբդենի ,քարաղի պաշարներով :
- Կասպից ծովում կա աղի մեծ պաշարներ, սաղմոն և թառափ տեսակի ձկներ , հատակում `նավթի ,բնական գազի պաշարներ :

*առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- կարողանա քարտեզի վրա ցույց տալ Ադրբեջանը և մայրաքաղաք Բաքուն:
- կարողանա քարտեզի վրա ցույց տալ Կասպից ծովը:
- հանքաքարի, ալյումինի հումքի, մոլիբդենի ,քարաղի պաշարներով :
- Կասպից ծովում կա աղի մեծ պաշարներ, սաղմոն և թառափ տեսակի ձկներ , հատակում `նավթի ,բնական գազի պաշարներ :

## Աղբբեջան .Բնակչությունը , տնտեսությունը

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Որքա՞ն է Աղբբեջանի բնակչությունը:
2. Ո՞ր լեզվաընտանիքին է պատկանում աղբբեջաներենը :
3. Ի՞նչ կրոն են դավանում աղբբեջանցիները:
4. Որտե՞ղ են զբաղվում բուսաբուծությամբ :
5. Ի՞նչ է արտահանում Աղբբեջանը :

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Աղբբեջանի բնակչությունը 2012 թ. -ի ցուցանիշով կազմել է 9,3 մլն մարդ :
- Աղբբեջաներենը պատկանում է ալթայյան լեզվաընտանիքի թյուրքական լեզվախմբին :
- Բնակչության 93 % -ը դավանում է մահմեդկանության շիա ուղղությունը:
- Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է ,որով զբաղվում են Կուր-Արաքսյան դաշտավայրում:
- Արտահանում են նավթ, նավթամթերք, բամակի մանրաթել, պարենամթերք ,քիմիական ապրանքներ :

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- կարողանա քարտեզի վրա ցույց տալ Կուր-Արաքսյան դաշտավայրը :
- նշել ուրվագծային քարտեզի վրա Աղբբեջանը և Կուր-Արաքսյան դաշտավայրը :
- բուսաբուծությունն է ,որով զբաղվում են Կուր-Արաքսյան դաշտավայրում:

- Արտահանում են նավթ, նավթամթերք, բամակի մանրաթել, պարենամթերք ,քիմիական ապրանքներ

**Թուրքիայի Հանրապետություն (Թուրքիա). Աշխարհագրական դիրքը , բնական պայմաններն ու ռեսուրսները**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞ր աշխարհանասերում է գտնվում Թուրքիան :
2. Ո՞րն է Թուրքիայի մայրաքաղաքը:
3. Նշել Թուրքիային սահմանակից երկրներից երկուսը :
4. Նշել Թուրքիայի տարածքից սկիզբ առնող երկու գետ:
5. Ի՞նչ օգտակար հանածոներով է հարուստ երկրի ընդերքը :

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Թուրքիայի տարածքը գտնվում է միաժամանակ երկու աշխարհանասերում՝ Ասիա և Եվրոպա :
- Թուրքիայի մայրաքաղաքը Անկարան է :
- Թուրքիան սահմանակից է Հայաստանի , Վրաստանի հետ :
- Թուրքիայի տարածքից են սկիզբ առնում Եփրատ և Տիգրիս գետերը :
- Թուրքիայի ընդերքը հարուստ է բորատների, քրոմի, մանգանի, ածխի, տուֆի, ծծմբի, կերակրի աղի պաշարներով:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա քարտեզի վրա ցույց տալ քարտեզի վրա Թուրքիան և մայրաքաղաք Անկարան:
- ցույց տալ սահմանակից երկրներից մեկը :
- ցույց տալ Եփրատ և Տիգրիս գետերը :

**Թուրքիա. Բնակչությունը, տնտեսությունը**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Որքա՞ն է Թուրքիայի բնակչությունը:
2. Ի՞նչ կրոն են դավանում թուրքերը :
3. Ի՞նչ մշակաբույսեր են աճեցնում:
4. Ո՞ր ծովերի ափերն են հանդիսանում զբոսաշրջային կենտրոն:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- 2012 թվականի ցուցանիշով Թուրքիայի բնակչությունը կազմել է 75,2 մլն մարդ :
- թուրքերը դավանում են մահմեդականության սուննի ուղղությունը:
- Գլխավոր մշակաբույսերն են՝ ցորենը, գարին, բրինձը, բամբակենին, ծխախոտը, շաքարի ճակնդեղը, խաղողը, ցիտրուսները և այլն :
- Զբոսաշրջային կենտրոններ են հանդիսանում Սև և Միջերկրական ծովերի ափերը:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- կարողանա քարտեզի վրա ցույց տալ Սև և Միջերկրական ծովերը:
- մակագրել ուրվագծային քարտեզի վրա:



**Իրան. Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսներ**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞րն է Իրանի մայրաքաղաքը:
2. Պետական կառավարման ինչպիսի՞ ձև ունի Իրանը:
3. Ի՞նչ համաշխարհային նշանակության օգտակար հանածոներով է հարուստ Իրանը:

*առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Իմանա Իրանի մայրաքաղաքը:
- Իմանա Իրանի կառավարման ձևը:
- Հարուստ է նավթի, բնական գազի, մետաղային և շինանյութերի պաշարներով:

*առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա քարտեզի վրա ցույց տալ Իրանը:
- Կարողանա թվարկել օգտակար հանածոները:
- Ուրվագծային քարտեզի վրա նշել Իրանը և նրա մայրաքաղաքը:

**Իրան. Բնակչությունը, տնտեսությունը**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞ր լեզվաընտանիքին են պատկանում պարսիկները և ինչ կրոն են դավանում:
2. Թվարկիր Իրանի խոշոր քաղաքների անուններ:
3. Ի՞նչ են արտահանում Իրանից:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Իմանա, \_\_\_\_\_ որ պարսկերենը պատկանում է \_\_\_\_\_ հնդեվրոպական լեզվաընտանիքին: \_\_\_\_\_ Դավանում \_\_\_\_\_ են մահմեդականության շիա ուղղությունը:
- Իմանա Իրանի խոշոր քաղաքներից մի քանիսի անունները:
- Արտահանում \_\_\_\_\_ են \_\_\_\_\_ նավթ, \_\_\_\_\_ բնական գազ, նավթաքիմիական արտադրանք, գորգեր, չոր մրգեր, բամբակ, ծովամթերք:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա նշել, թե որ լեզվաընտանիքին է պատկանում պարսկերենը:
- Կարողանա թվել մի քանի քաղաքների անուններ:
- Կարողանա թվարկել արտահանվող արտադրատեսակները/առնվազն երկուսը/:

## Թեմատիկ պլան

### **Կենտրոնական Ասիա. Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ուեսուրսները**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞ր երկրներն են մտնում Կենտրոնական Ասիայի կազմի մեջ:
2. Օգտակար ո՞ր հանածոների պաշարներով են հարուստ Կենտրոնական Ասիայի երկրները:
3. Ո՞րն է Կենտրոնական Ասիայի ամենամեծ պետությունը:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Իմանա տարածաշրջանի կազմի մեջ մտնող 5 պետությունները:
- Տարածաշրջանը հարուստ է քարածխի, նավթի, բնական գազի, երկաթի, մանգանի, ցինկի, կապարի, ոսկու հանքաքարի պաշարներով:
- Կենտրոնական Ասիայի տարածքով ամենամեծ երկիրը Ղազախստանն է, իսկ բնակչության թվով Ուզբեկստանը:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա աշխարհի քաղաքական քարտեզի վրա ցույց տալ Կենտրոնական Ասիայի երկրները/առնվազն երեք երկիր/
- Կարողանա թվարկել օգտակար հանածոները:
- Ուրվագծային քարտեզի վրա մակագրել տարածաշրջանի երկրները:

**Կենտրոնական Ասիա. Բնակչությունը և տնտեսությունը**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ի՞նչ ժողովուրդներ են ապրում Կենտրոնական Ասիայում:
2. Որո՞նք են Կենտրոնական Ասիայի երկրների գյուղատնտեսության մասնագիտացման ճյուղերը:
3. Ի՞նչ են արտահանում Կենտրոնական Ասիայի երկրները:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Իմանա, որ Կենտրոնական Ասիայի բնակչությունը բազմազգ է՝ ուզբեկներ, դազախներ, տաջիկներ, թուրքմեններ և դրդգներ:
- Գյուղատնտեսության մասնագիտացման ճյուղերն են բուսաբուծությունը և անասնապահությունը:
- Կենտրոնական Ասիայի երկրները արտահանում են բնական գազ, նավթ, բամբակ, գյուղատնտեսական ապրանքներ, բուրդ, գորգեր և այլն:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա թվարկել Կենտրոնական Ասիայում ապրող ժողովուրդները:
- Թվարկել արտահանվող ապրանքները / առնվազն երկուսը/
- Թվարկել մշակաբույսեր, որոնք մշակվում են Կենտրոնական Ասիայի երկրներում:

**Հարավային Ասիա. Ընդհանուր աշխարհագրական ակնարկ**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞ր երկրներն են մնում Հարավային Ասիայի կազմի մեջ:

2. Ո՞ր ազգերն են բնակվում Հարավային Ասիայում:

3. Ո՞րն է Հարավային Ասիայի բնակչությամբ ամենամեծ երկիրը:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Հարավային Ասիայի կազմի մեջ մտնող 7 երկրները / առնվազն 3-ի անունը/:
- Բնակչությունը քաղաքացիները, փենջաբցիները, նեպալցիները և ուրիշներ:
- Հարավային Ասիայի բնակչության թվով ամենամեծ երկիրը Հնդկաստանն է:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա աշխարհի քաղաքական քարտեզի վրա ցույց տալ Հարավային Ասիայի կազմի մեջ մտնող երկրները/առնվազն երեքը/
- Պետությունները մակագրել ուրվագծային քարտեզի վրա և նշել մայրաքաղաքները:
- Կարողանա թվարկել տարածաշրջանում բնակվող ժողովուրդներից երկուսը:

## Թեմատիկ պլան

**Հնդկաստան. Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները, բնակչությունը**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞րն է Հնդկաստանի մայրաքաղաքը:
2. Պետական կառավարման ինչպիսի՞ ձև ունի Հնդկաստանը:
3. Ո՞ր թերակղզու վրա է գտնվում Հնդկաստանը:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Իմանա, որ Հնդկաստանի մայրաքաղաքը Դելին է:
- Իմանա Հնդկաստանի կառավարման ձևը:
- Իմանա, որ Հնդկաստանը գտնվում է Հնդստան թերակղզու վրա:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա աշխարհի քաղաքական քարտեզի վրա ցույց տալ Հնդկաստանը և նրա մայրաքաղաքը:
- Կարողանա նշել, որ կառավարման ձևով խորհրդարանական հանրապետություն է:
- Կարողանա աշխարհի ֆիզիկական քարտեզի վրա ցույց տալ Հնդստան թերակղզին:

**Հնդկաստան. տնտեսությունը**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Արդյունաբերության ո՞ր ճյուղերն են Հնդկաստանում զարգացած:
2. Որո՞նք են Հնդկաստանի գյուղատնտեսության մասնագիտացման ճյուղերը:
3. Ի՞նչ են արտահանում Հնդկաստանից:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Իմանա,որ Հնդկաստանում զարգացած է սև մետաղաձուլությունը, մեքենաշինությունը,քիմիական արդյունաբերությունը, թեթև և սննդի արդյունաբերությունը:
- Իմանա, որ գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- Իմանա, որ Հնդկաստանից արտահանում են թանկարժեք քարեր, ոսկերչական իրեր, հագուստ գործվածք,մեքենաշինական արտադրանք, քիմիական արտադրանք, գյուղատնտեսական մթերքներ/թեյ, համեմունք և այլն/:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա թվարկել արդյունաբերության ճյուղերը :
- Թվարկել մշակաբույսեր, որոնք մշակում են Հնդկաստանում / առնվազն երեքը/ :
- Թվարկել արտահանվող ապրանքները:

## Թեմատիկ պլան

**Հարավարևելյան Ասիա. Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Թվարկել Հարավարևելյան Ասիայի կազմի մեջ մտնող երկու խոշոր երկրի անուն:
2. Ո՞րն է Հարավարևելյան Ասիայի ամենազարգացած պետությունը:
3. Թվարկել մետաղներ, որոնց պաշարներով Հարավարևելյան Ասիայի երկրները չափազանց հարուստ են:

*առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Իմանա տարածաշրջանի կազմի մեջ մտնող 11 երկրներից տարածքով ամենամեծ (Ինդոնեզիա, Մյանմա և ամենափոքր (Սինգապուր) պետությունները:
- Ամենազարգացած երկիրը Սինգապուր քաղաք-պետությունն է :
- Տարածաշրջանը հարուստ է նավթի, բնական գազի, պղնձի, ոսկու, անագի պաշարներով:
- 

*առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա աշխարհի քաղաքական քարտեզի վրա ցույց տալ նշված երկրները:
- Կարողանա մակագրել ուրվագծային քարտեզի վրա:



**Հարավարևելյան Ասիա. Բնակչությունը և տնտեսությունը**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ինչո՞վ է պայմանավորված Հարավարևելյան Ասիայի բնակչության մեծ խտությունը:
2. Տնտեսության ո՞ր ճյուղն է Հարավարևելյան Ասիայի տնտեսության հիմքում:
3. Ի՞նչ են արտահանում Հարավարևելյան Ասիայի երկրները:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Իմանա, որ Հարավարևելյան Ասիայում բնակվում է 617 մլն մարդ, բնակչությունը անհավասարաչափ է բաշխված:
- Հարավարևելյան Ասիայի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է: Մշակում են բրինձ, մանիոկ, գետնանուշ, սուրճ :
- Արտահանվում են հագուստ, կոշիկ, կաշվե ապրանքներ, հեռուստացույցներ, նավաշինական ապրանքներ:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա ցույց տալ առավել խտաբնակ տարածքները:
- Մեկնաբանել գյուղատնտեսության դերը:
- Թվարկել արտահանման մեծ ծավալներ ունեցող երկրներ /երկուսը/

## Թեմատիկ պլան

### Արևելյան Ասիա. Ընդհանուր աշխարհագրական ակնարկ

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Օգտակար ո՞ր հանաձոնների պաշարներով են հարուստ Արևելյան Ասիայի երկրները:
2. Որո՞նք են Արևելյան Ասիայի ամենազարգացած պետությունները:
3. Ո՞ր արտադրատեսակների գծով է Արևելյան Ասիան աշխարհում առաջատար համարվում:

*առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Իմանա որոշ օգտակար հանաձոնների պաշարներ:
- Նշել տարածաշրջանի մի քանի զարգացած պետություններ:
- Տարածաշրջանն աաշխարհի առաջատարն է ածխի հանույթով, սև մետաղաձուլությամբ, տեքստիլարդյունաբերության, մեքենաշինության որոշակի արտադրատեսակների, հացահատիկի, ոչխարների ու խոզերի գլխաքանակի, ձկնորսության և բազմաթիվ արտադրությունների գծով:
- 

*առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա քարտեզի վրա ցույց տալ տարածաշրջանի երկրները /առնվազն 3 երկիր/
- Կարողանա թվարկել տնտեսու-թյամբ ամենազարգացած պետությունները:
- Թվարկել այն արտադրատեսակները, որոնցով տարածաշրջանն աշխարհում առաջատար է:

## Չինաստան

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞րն է Չինաստանի մայրաքաղաքը:
2. Պետական կառավարման ինչպիսի՞ ձև ունի Չինաստանը:
3. Բնակչության թվով աշխարհում ո՞ր տեղն է զբաղեցնում Չինաստանը:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Իմանա Չինաստանի մայրաքաղաքը:
- Իմանա Չինաստանի պետական կառավարման ձևը:
- Իմանա, որ բնակչության թվով աշխարհում զբաղեցնում է առաջին տեղը:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա քարտեզի վրա ցույց տալ տարածաշրջանի երկրները /առնվազն 3 երկիր/
- Կարողանա թվարկել տնտեսությամբ ամենազարգացած պետությունները:
- Թվարկել այն արտադրատեսակները, որոնցով տարածաշրջանն աշխարհում առաջատար է:

## Չինաստանի տնտեսությունը

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Արդյունաբերության ո՞ր ճյուղերն են Չինաստանում զարգացած:
2. Որո՞նք են Չինաստանի գյուղատնտեսության մասնագիտացման ճյուղերը:
3. Ի՞նչ են արտահանում Չինաստանից:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Իմանա Չինաստանի արդյունաբերության ճյուղերը:
- Իմանա, որ գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- Իմանա , որ Չինաստանը արտահանում է նավթամթերք, ավտոմեքենաներ, հեռուստացույցներ:
- 

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա թվարկել արդյունաբերության առաջատար ճյուղերը:
- Կարողանա թվարկել այն ատաղրատեսակները, որոնք ունեն արտահանման նշանակություն:

## Թեմատիկ պլան

**Ճապոնիա. Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները, բնակչությունը**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞րն է Ճապոնիայի մայրաքաղաքը:
2. Պետական կառավարման ինչպիսի՞ ձև ունի Ճապոնիան:
3. Ի՞նչ կրոն են դավանում Ճապոնացիները:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Իմանա Ճապոնիայի մայրաքաղաքը:
- Իմանա Ճապոնիայի պետական կառավարման ձևը:
- Իմանա, որ Ճապոնացիները դավանում են սինթոիզմ:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Ուրվագծային քարտեզի վրա նշել Ճապոնիան և մայրաքաղաքը:
- Կարողանա ներկայացնել Ճապոնիայի պետական կառավարման ձևը:

## Ճապոնիա. Տնտեսությունը

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Արդյունաբերության ո՞ր ճյուղերն են Ճապոնիայում զարգացած:
2. Որո՞նք են Ճապոնիայի գյուղատնտեսության առաջատար ճյուղերը:
3. Ի՞նչ են արտահանում Ճապոնիայից:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Երկրի արդյունաբերության առաջատար ճյուղը մեքենաշինությունն է:
- Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- Արտահանվող ապրանքների մեջ գերակշռում են ռոբոտները, տեսաձայնագրիչները, տեսախցիկները, համակարգիչները և այլն:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Նշել Ճապոնիայի արդյունաբերության առաջատար ճյուղերը:
- Նշել Ճապոնիայի գյուղատնտեսության առաջատար ճյուղերը:
- Թվարկել արտահանվող արտադրատեսակները /առնվազն երկուսը/

## Թեմատիկ պլան

**Աֆրիկա. Քաղաքական քարտեզը, աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Նշել Աֆրիկյան միապետություններ:
2. Ո՞ր տարեթիվն է համարվում «Աֆրիկայի տարի» և ինչու՞:
3. Ո՞ր գետն է Աֆրիկայում ամենաջրառատը, որ այժի է ընկնում ջրակներգետիկ ռեսուրսներով:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Աֆրիկայում կա 55 պետություն, որոնցից Լեսոտոն, Սվազիլենդը (Էսվատինին) և Մարոկոն միապետություններ են, իսկ մյուսները՝ հանրապետություններ:
- 1960 թվականը համարվում է «Աֆրիկայի տարի», քանի որ այդ թվականին անկախություն են ձեռք բերել աֆրիկյան 17 պետություններ:
- Ամենաջրառատ գետը Կոնգոն է, որը 2 անգամ է հատում հասարակածը:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Աշխարհի քաղաքական քարտեզի վրա ցույց տալ թվարկված աֆրիկյան միապետությունները:
- Մեկնաբանել «Աֆրիկայի տարի» արտահայտությունը:
- Քարտեզի վրա ցույց տալ Աֆրիկայի ամենաջրառատ գետը:

## Թեմատիկ պլան

### Աֆրիկայի բնակչությունը և տնտեսությունը

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞ր ռասսան է ձևավորվել Աֆրիկայում:
2. Արդյունաբերության ո՞ր ճյուղերն են առավել բնորոշ աֆրիկյան գրեթե բոլոր երկրներին՝ հանքարդյունաբերության, թե՞ վերամշակող արդյունաբերության:
3. Թվարկել բուսաբուծության երկու արտադրատեսակներ, որոնց արտադրությամբ Աֆրիկան աշխարհում առաջատար տեղեր է զբաղեցնում:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Աֆրիկայում ձևավորվել է նեգրոիդ ռասսան:
- Աֆրիկյան գրեթե բոլոր երկրներին բնորոշ է արդյունաբերության հանքարդյունաբերական ճյուղը:
- Աֆրիկան աշխարհում առաջատար տեղեր է զբաղեցնում եգիպտացորենի, կորեկի, սորգոյի, ցորենի ու բրնձի մշակությամբ:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Նշել, թե ո՞ր ռասսան է ձևավորվել Աֆրիկա աշխարհամասում:
- Թվարկել արդյունաբերության ճյուղերը:
- Նշել աֆրիկայում աճեցվող մշակաբույսեր /երկուսը/



## Թեմատիկ պլան

**Հարավաֆրիկյան Հանրապետություն. Ընդհանուր աշխարհագրական ակնարկ**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞րն է ՀԱՀ մայրաքաղաքը:
2. Ի՞նչ համաշխարհային նշանակության օգտակար հանածոներով է հարուստ ՀԱՀ:
3. Ո՞ր աֆրիկյան պետություններն են գտնվում ՀԱՀ տարածքում:

*առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- ՀԱՀ-ի մայրաքաղաքը՝ Պրետորիա քաղաքն է:
- Այստեղ են գտնվում ոսկու համաշխարհային հետազոտված պաշարների 53%-ը և ալմաստի՝ 20%-ը:
- Երկրի տարածքում են գտնվում Լետտո և Սվազիլանդ (Էսվատինի) պետությունները:

*առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա քաղաքական քարտեզի վրա ցույց տալ ՀԱՀ-ը, մայրաքաղաքը և երկրի տարածքում գտնվող պետությունները:
- Կարողանա թվարկել երկրի օգտակար հանածոներից երկուսը:

## Ավստրալիա և Օվկիանիա. Ընդհանուր աշխարհագրական ակնարկ

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Թվարկել Օվկիանիայի կղզիներից երկու ամենախոշորները:
2. Ո՞ր օվկիանոսի տարածքում է գտնվում Օվկիանիան:
3. Ի՞նչ մասերից է կազմված Օվկիանիան:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Իմանա Ավստրալիա և Օվկիանիա տարածաշրջանի խոշոր կղզիները Նոր Գվինեան և Նոր Զելանդիան:
- Օվկիանիան գտնվում է Խաղաղ օվկիանոսի տարածքում:
- Օվկիանիայի մասերն են կազմում Մելանեզիան, Միկրոնեզիան և Պոլինեզիան:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- > Կարողանա քարտեզի վրա ցույց տալ՝
  - ա) Խաղաղ օվկիանոսը,
  - բ) Ավստրալիան
  - գ) Օվկիանիան

## Ավստրալիական Միություն. Ընդհանուր աշխարհագրական ակնարկ

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞ր նախդիրը կարելի է օգտագործել բնութագրելու համար Ավստրալիան որպես ցածր, հարթ, փոքր, չոր մայրցամաք:
2. Ո՞րն է Ավստրալիական Միության մայրաքաղաքը:
3. Թվարկել Ավստրալիայի արտահանության մեծ մասը կազմող ապրանքատեսակների երեք խմբերը:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Ավստրալիան կարելի է բնութագրել որպես ամենացածր, ամենահարթ, ամենափոքր, ամենաչոր մայրցամաք:
- Ավստրալիական Միության մայրաքաղաքը Կանբերա քաղաքն է:
- Ավստրալիան հիմնականում արտահանում է հանքային հումք, կիսաֆաբրիկատներ և պարենային ապրանքներ:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա ներկայացնել աշխարհագրական դիրքը:
- Կարողանա ցույց տալ Ավստրալիայի մայրաքաղաքը:

## Ամերիկա. Ընդհանուր աշխարհագրական ակնարկ

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞ր կիսագնդում է գտնվում Ամերիկան:
2. Ի՞նչ տարածաշրջաններից է կազմված Ամերիկան:
3. Ո՞ր երկու հզոր երկրներն են ընդգրկվում Հյուսիսային Ամերիկայի կազմի մեջ:

*առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Ամերիկա աշխարհամասը գտնվում է հյուսիսային կիսագնդում
- Ամերիկա աշխարհամասը ներառում է Հյուսիսային Ամերիկա, և Լատինական Ամերիկա տարածաշրջանները:
- Հյուսիսային Ամերիկայի տարածքում են գտնվում Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ) և Կանադա պետությունները:

*առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա ցույց տալ Հյուսիսային Ամերիկա տարածաշրջանը քարտեզի վրա:
- Կարողանա ցույց տալ ԱՄՆ-ը քարտեզի վրա:
- Կարողանա ցույց տալ Կանադան քարտեզի վրա:

[Թեմատիկ պլան](#)

**Ամերիկայի Միացյալ Նահանգներ. Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները  
և ռեսուրսները, բնակչությունը**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները  
ստուգելու համար*

1. Ո՞րն է ԱՄՆ մայրաքաղաքը:
2. Տնտեսական զարգացման առումով ինչպիսի՞ երկիր է ԱՄՆ-ն:
3. Ըստ պետական կառուցվածքի ինչպիսի՞ երկիր է ԱՄՆ-ն:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը  
պետք է իմանա*

- ԱՄՆ մայրաքաղաքը՝ Վաշինգտոն քաղաքն է:
- Տնտեսական զարգացման առումով ԱՄՆ-ն զարգացած, հետարդյունաբերական երկիր է:
- Ըստ պետական կառուցվածքի ԱՄՆ-ն դաշնային հանրապետություն է, կազմված՝ 50 նահանգներից:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը  
պետք է կարողանա*

- Կարողանա քաղաքական քարտեզի վրա ցույց տալ ԱՄՆ-ն:
- Կարողանա քաղաքական քարտեզի վրա ցույց տալ մայրաքաղաք Վաշինգտոնը:
- Ներկայացնել ԱՄՆ պետական կառուցվածքը:

## Թեմատիկ պլան

### **ԱՄՆ-ի տնտեսությունը**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ի՞նչ են արտադրում Միլիկոնյան հովտում:
2. Թվարկիր համակարգչային տեխնիկա արտադրող երկու ընկերության անուն:
3. Թվարկիր ամերիկյան մեքենա արտադրող ընկերություններ:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Միլիկոնյան հովտում են կենտրոնացած գիտատար տեխնոլոգիական արտադրությունները:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի արտադրությամբ աչքի են ընկնում Այ Բի Էմ, Էյվիլ և Մայքրոսոֆթ ընկերությունները :
- Ամերիկյան մեքենա արտադրող խոշոր ընկերություններն են ` Ջեներալ Մոթորսը, Ֆորդը և Բրայսլերը:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա քարտեզի վրա ցույց տալ Միլիկոնյան հովիտը:
- Նշել համակարգչային տեխնիկա արտադրող ընկերություններ /երկուսը/:
- Նշել ավտոմեքենա արտադրող ընկերություններ /երկուսը/:

## ԱՄՆ-ի տնտեսությունը (շարունակություն)

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞րն է ԱՄՆ-ի տնտեսական մայրաքաղաքը:
2. Ի՞նչ է ներմուծում և ի՞նչ է արտահանում ԱՄՆ-ն:
3. ԱՄՆ-ում ո՞ր գյուղատնտեսական մշակաբույսերն ունեն «գոտիական» տարածում:

*առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Նյու Յորքը ոչ միայն աշխարհի խոշոր քաղաքներից է, այլև ԱՄՆ-ի տնտեսական մայրաքաղաքը:
- ԱՄՆ-ն առավելապես ներմուծում է տարբեր արտադրությունների հանքատեսակներ, վառելիք և կիսապատրաստուկներ: Արտահանում է՝ մեքենաներ, սարքավորումներ և մթերքներ:
- Մեծ հարթավայրերում ձևավորվել է «ցորենի», Կենտրոնական հարթավայրերում՝ «եգիպտացորենի» գոտին, իսկ հարավում՝ «բամբակի» գոտին է:

*առարկայի չափորոշային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Քաղաքական քարտեզի վրա ցույց տալ Նյու Յորք քաղաքը:
- Նշել ԱՄՆ ներմուծվող և երկրից արտահանվող ապրաքատեսակներ (յուրաքանչյուրից մեկական օրինակ)

- Նշել ԱՄՆ-ում աճեցվող հիմնական մշակաբույսերից երկուսը:

[Թեմատիկ պլան](#)

## **Կանադա. Ընդհանուր աշխարհագրական ակնարկ**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞րն է Կանադայի մայրաքաղաքը:

2. Պետական կառավարման ինչպիսի՞ ձև ունի Կանադան:

3. Տնտեսության ո՞ր ճյուղն է Կանադայում, որի զարգացմանը նպաստել է ոչ միայն հումքային հարուստ բազայի առկայությունը, նաև էժան ջրային ուղիների և էլեկտրաէներգիայի առկայությունը:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Կանադայի մայրաքաղաքն՝ Օտտավա քաղաքն է:
- Կանադան դաշնություն է, կազմված 10 նահանգներից և 3 դաշնային տարածքից:
- Կանադայի արդյունաբերության տարբեր ուղղությունների զարգացմանը նպաստել է ոչ միայն հումքային հարուստ բազայի առկայությունը, նաև էժան ջրային ուղիների և էլեկտրաէներգիայի առկայությունը:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա քարտեզի վրա ցույց տալ Կանադան և Օտտավա մայրաքաղաքը:
- Ներկայացնել Կանադայի պետական կառավարման ձևը:
- Ներկայացնել երկրի արդյունաբերության զարգացմանը նպաստող գործոնները /երկուսը/:



**Լատինական Ամերիկա. Կազմը, աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Թվարկել Լատինական Ամերիկայի ենթատարածաշրջանները:
2. Ո՞րն է Լատինական Ամերիկայի ամենամեծ պետությունը:
3. Ո՞ր ռեսուրսներն են համարվում Լատինական Ամերիկայի տնտեսական զարգացման կարևորագույն նախադրյալ:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Լատինական Ամերիկայում ՄԱԿ-ն առանձնացնում է Կարիբյան ավազան, Կենտրոնական Ամերիկա և Հարավային Ամերիկա ենթատարածաշրջանները:
- Լատինական Ամերիկայի ամենամեծ պետությունը Բրազիլիան է:
- Լատինական Ամերիկան հարուստ է գունավոր մետաղների (արծաթ, պղինձ), նավթի, բնական գազի, ածխի, երկաթաքարի և իհարկե՝ ջրային ռեսուրսներով:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա աշխարհի քաղաքական քրտեզի վրա ցույց տալ Լատինական Ամերիկան:
- Կարողանա ցույց տալ տարածաշրջանի ամենամեծ երկիրը՝ Բրազիլիան:

- Նշել առնվազն երկու ռեսուրսներ, որոնցով հարուստ է տարածաշրջանը:

### Թեմատիկ պլան

#### Լատինական Ամերիկա. բնակչությունը և տնտեսությունը

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Որո՞նք են Լատինական Ամերիկայում տիրապետող լեզուները:
2. Ո՞ր երկրներն են Լատինական Ամերիկայի ամենազարգացած երկրները:
3. Թվարկիր երկու ապրանքատեսակ, որոնք Լատինական Ամերիկան հանում է միջազգային շուկա:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Լատինական Ամերիկայում խոսում են իսպաներեն, պորտուգալերեն և անգլերեն լեզուներով:
- Լատինական Ամերիկայի ամենազարգացած երկրներն են Բրազիլիան և Արգենտինան:
- Լատինական Ամերիկայից միջազգային շուկա են հանվում նավթ, ձկնամթերքներ, սուրճ, կակաո և այլն:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Թվարկել լեզուները, որոնք տարածված են Լատինական Ամերիկայում:
- Կարողանա աշխարհի քաղաքական քարտեզի վրա ցույց տալ Բրազիլիան և Արգենտինան:
- Նշել ապրանքատեսակներ, տարածաշրջանից դուրս են բերվում միջազգային շուկա /երկուսը/:

**Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն. Ընդհանուր աշխարհագրական ակնարկ**

*հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար*

1. Ո՞րն է Բրազիլիայի մայրաքաղաքը:
2. Ի՞նչ լեզվով են խոսում Բրազիլիայում:
3. Ո՞ր ապրանքներն են գերակշռում Բրազիլիայի արտահանման և ներկրման մեջ:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա*

- Իմանա, որ Բրազիլիայի մայրաքաղաքը Բրազիլիա քաղաքն է:
- Իմանա, որ պաշտոնական լեզուն պորտուգալերենն է:
- Բրազիլիան արտահանում է արդյունաբերական պատրաստի արտադրատեսակներ, սուրճ, կակաո, արևադարձային մրգեր, միս: Ներկրում է՝ մեքենաներ, հանքային հումք և կիսապատրաստուկներ:

*առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա*

- Կարողանա քաղաքական քարտեզի վրա ցույց տալ Բրազիլիան և երկրի մայրաքաղաքը:
- Կարողանա նշել, թե ո՞ր լեզվով են խոսում Բրազիլիայում:
- Նշել Բրազիլիա ներմուծվող և երկրից արտահանվող ապրաքատեսակներ /յուրաքանչյուրից մեկական օրինակ/